ՁԱՅՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԼՈՒՍԱԴԻՈԴԱՅԻՆ ԷԿՐԱՆԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՅ- 03/005/2021

ք. Երևան «10» մարտ 2021թ.

«Ջունիոր Սպորտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրեն Վահե Գալստյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գայա03» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Հայկ Աղաբեկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին մատակարարման և ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրում Պատվիրատուն և Կատարողն անհատապես կանվանվեն Կողմ, իսկ միասին՝ Կողմեր:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կատարողը պարտավորվում է Պայմանագրով նախատեսված ժամկետներում, Երևանում Պատվիրատուի նշած հասցեում հանձնել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ով (ապրանքների տեխնիկական բնութագիր-նախահաշիվ) նախատեսված անվանացանկին, նկարագրությանն ու քանակին համապատասխանող ապրանքներ, իրենց լրակազմերով (կոմպլեկտով) /առկայության դեպքում/, պատկանելիքներով /առկայության դեպքում/ ապրանքները (այսուհետ՝ Ապրանքներ), ինչպես նաև մատուցել նշված Ապրանքների՝ այդ թվում նաև դրա բաղկացուցիչ առանձին սարքավորումների ընթացիկ սպասարկման, տեղադրման, կարգաբերման, անհրաժեշտ լարանցումների մոնտաժման աշխատանքներ(այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատակարարված Ապրանքները, կատարված Ծառայությունները և վճարել դրանց համար Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.2. Պայմանագրով Ապրանքները և Ծառայությունները կհամարվեն պատշաճ և ամբողջությամբ կատարված հանձման-ընդունման ակտի (այսուհետ՝ Ակտ) երկկողմ ստորագրման պահից:

## 2. Մատակարարման և Ծառայությունների պայմանները

2.1. Կատարողը Ապրանքները մատակարարում է Պայմանագրի ստորագրման պահից՝ մինչև 2021թ.-ի մայիսի 10-ը ներառյալ:

2.2. Կատարողը Ծառայությունները մատուցում է Պայմանագրի ստորագրման պահից՝ մինչև 2021թ.-ի մայիսի 10-ը ներառյալ:

2.3. Մատակարարման օր է համարվում Ապրանքները Պատվիրատուի կողմից Ակտի հիման վրա ընդունելու օրը:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. <u>Կատարողը իրավունք ունի՝</u>

3.1.1. Պատվիրատուի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում Ապրանքներն և Ծառայությունները առանց որևէ հիմնավորման չընդունելու դեպքում հրաժարվել Պայմանագիրը կատարելուց:

3.1.2. Պատվիրատուից պահանջել վճարելու մատակարարված Ապրանքների և կատարված Ծառայությունների համար Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.2. <u>Կատարողը պարտավոր է՝</u>

3.2.1. Պայմանագրով նախատեսված Ապրանքները հանձնել Պատվիրատուին Պայմանագրով նախատեսված ժամկետում և վայրում:

3.2.2. Ապրանքները հանձնելու հետ միաժամանակ Պատվիրատուին հանձնել դրանց պատկանելիքները, ինչպես նաև դրանց վերաբերող փաստաթղթերը /առկայության դեպքում/.

3.2.3. Պատվիրատուին հանձնել Պայմանագրով նախատեսված տեսականու (այսուհետ՝ Տեսականու) և պատշաճ որակի Ապրանքներ.

3.2.4. Ապրանքները Պատվիրատուին հանձնել պատշաճ տարայով և (կամ) փաթեթով (առկայության դեպքում)

3.2.5. Պատվիրատուի պահանջով ողջամիտ ժամկետում, անհատույց վերացնել Ապրանքների ապափաթեթավորման և առաջին կիրառության ժամանակ ի հայտ եկած թերությունները, վնասվածքները և/կամ անսարքությունները, կամ փոխարինել դրանք համանման ապրանքներով, ընդ որում նման պահանջ Պատվիրատուի կողմից կարող է ներկայացվել Ապրանքները գնելուց հետո 20 օրվա ընթացքում:

3.2.6. Ծառայություններն ամբողջ ծավալով մատուցել Պայմանագրով նշված ժամկետում:

3.2.7. Ծառայությունները մատուցել տվյալ տեսակի ծառայությունների մատուցման համար սահմանված կանոնների և տեխնիկական նորմերի պահպանմամբ՝ ըստ անհրաժեշտության համապատասխան փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ:

3.2.8. Պատվիրատուի պահանջով, ողջամիտ ժամկետում, անհատույց, վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները և/կամ բնականոն օգտագործման պայմաններում առաջացած վնասվածքները:

3.3. <u>Պատվիրատուն իրավունք ունի՝</u>

3.3.1. Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Կատարողը հրաժարվում է հանձնել վաճառված ապրանքը:

3.3.2. Պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված ապրանքի համար վճարելուց, եթե Կատարողը սույն Պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, իսկ եթե ապրանքի համար Պատվիրատուն վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

3.3.3. Եթե Կատարողի կողմից հանձնվել է Տեսականու մասին պայմանի խախտմամբ Ապրանքներ՝

ա) հրաժարվել Ապրանքներից

բ) պահանջել փոխարինել մատակարարված Ապրանքները Պայմանագրով նախատեսված Տեսականուն համապատասխանող Ապրանքներով

գ) ընդունել հանձնված Ապրանքները:

3.3.4. Եթե հանձնված է անպատշաճ որակի Ապրանքներ, պահանջել Կատարողից՝

ա) համաչափ պակասեցնել Ապրանքների գինը

բ) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում անհատույց վերացնել Ապրանքների թերությունները

գ) հատուցելու Ապրանքների թերությունները վերացնելու համար իր կողմից կատարած ծախսերը:

3.3.5. Ապրանքների որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերություններ) իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքների համար վճարված գումարը (եթե մինչև նման պահանջ ներկայացնելու պահը կատարվել է վճարում)

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքներով:

3.3.6. Անկոմպլեկտ Ապրանքներ հանձնելու դեպքում պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու Ապրանքների գինը

բ) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում կոմպլեկտավորելու Ապրանքները:

3.3.7. Եթե Կատարողը ողջամիտ ժամկետում չի կատարել Ապրանքները կոմպլեկտավորելու պահանջները՝

ա) պահանջել փոխարինելու անկոմպլեկտ Ապրանքները կոմպլեկտավորված Ապրանքներով

բ) հրաժարվել Պայմանագրից և պահանջել վերադարձնելու վճարված գումարը (եթե մինչև նման պահանջ ներկայացնելու պահը կատարվել է վճարում):

3.4. Պատվիրատուն պարտավոր է՝

3.4.1. Ապրանքների և Ծառայությունների դիմաց վճարել Պայմանագրով նախատեսված գումարը Պայմանգրով սահմանված ժամկետում:

3.4.2. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.4.3. Ապրանքներն ընդունելիս, ստուգել դրանց քանակը և որակը:

## 4. Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1. Պայմանագրով նախատեսված Ապրանքների և Ծառայությունների ընդհանուր գինը կազմում է 11.820.000 (տասնմեկ միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Գնի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ առանձին համաձայնագիր կազմելով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.2. Պայմանագրի 4.1 կետում նշված գինը ներառում է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ի Ապրանքների գնանշումը, մատուցվող Ծառայությունների վճարը, պայմանները կատարելու հետ կապված՝ Կատարողի այլ ծախսերը:

4.3. Պատվիրատուն Ապրանքների դիմաց վճարում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի՝ Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին՝ բանկային փոխանցմամբ:

4.4. Պայմանագրի 4.1. կետով նախատեսված ընդհանուր գնի 50 տոկոսը՝ այն է 5.910.000 (հինգ միլիոն ինը հարյուր տաս հազար) ՀՀ դրամ գումարը, որպես կանխավճար Պատվիրատուն վճարում է Կատարողին՝ կանխավճարային գումարի փոխանցման հաշվի հիման վրա, պայմանագիրը երկկողմ հաստատելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

4.5. Պայմանագրի 4.1. կետով նախատեսված ընդհանուր գնի 30 տոկոսը՝ այն է 3.546.000 (երեք միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամը, որպես կանխավճար Պատվիրատուն վճարում է Կատարողին՝ կանխավճարային գումարի փոխանցման հաշվի հիման վրա, Ապրանքները՝ Կատարողի կողմից ներմուծելուց հետո, Մաքսատանը գտնվելու ժամանակ (որի մասին Կատարողը գրավոր կամ բանավոր տեղեկացնում է Պատվիրատուին), 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

4.6. Պայմանագրի 4.1. կետով նախատեսված ընհանուր գումարի և Պայմանագրի 4.4. և 4.5. կետերով որպես կանխավճար վճարված գումարների տարբերությունը՝ այն է 2.364.000 (երկու միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ գումարը, Պատվիրատուն կվճարի Կատարողին Ակտի երկկողմանի ստորագրմանը և հաշվի երկկողմանի հաստատմանը հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ հաշիվը Կատարողի կողմից տրամադրվում է Պատվիրատուին Ակտով պատշաճ մատակարարված Ապրանքները և Ծառայություններն ընդունվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2. Ապրանքների համար երաշխիքային ժամկետը սահմանվում է 3(երեք) տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքների հանձնում-ընդունումը

6.1. Ապրանքներն ընդունելու ժամանակ Պատվիրատուն ստուգում է դրանց համապատասխանությունն Ապրանքներն ուղեկցող փաստաթղթերում նշված տվյալներին (ներառյալ՝ Պայմանագիրը)՝ ըստ անվանացանկի, քանակի, որակի և տեսականու:

6.2. Ապրանքների հանձնման-ընդունման գործընթացն ավարտվում է Ակտի երկկողմանի ստորագրմամբ, ինչը փաստում է, որ Ապրանքները Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետում ու վայրում հանձնվել և ընդունվել են Պատվիրատուի կողմից:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Եթե Կատարողը չի մատակարարել Պայմանագրով նախատեսված քանակի Ապրանքները, կամ չի կատարել անորակ Ապրանքները սահմանված ժամկետում պատշաճ որակի Ապրանքներով փոխարինելու Պատվիրատուի պահանջը, ապա Պատվիրատուն իրավունք ունի չմատակարարված Ապրանքները ձեռք բերել այլ անձանցից՝ ձեռքբերման հետ կապված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը վերագրելով Կատարողին:

7.2. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել վճարելու անպատշաճ որակի Ապրանքների համար, իսկ եթե արդեն վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարները:

7.3. Կատարողը, Պայմանագրով սահմանված ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գնորդին վերջինիս գրավոր պահանջով վճարում է տույժ՝ Ապրանքների արժեքի 0,5 տոկոսի չափով:

7.4. Պատվիրատուն, Պայմանագրով սահմանված վճարման ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Կատարողին վերջինիս գրավոր պահանջով վճարում է տույժ՝ Ապրանքների արժեքի 0,5 տոկոսի չափով:

7.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխնատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1. Պայմանագիրը կազմված է և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

9.2. Պայմանագիրը հանդիսանում է դրա առարկայի շուրջ Կողմերի ամբողջական համաձայնություն և գերակայում է Կողմերի միջև նախորդ բոլոր պայմանավորվածությունների նկատմամբ:

9.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը:

9.4. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.5. Պայմանագրի բոլոր փոփոխությունները և/կամ լրացումները Կողմերի միջև ձևակերպվում են գրավոր և ստորագրվում Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից՝ հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մասը:

9.6. Պայմանագիրը կարող է լուծվել յուրաքանչյուր Կողմի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին այդ մասին կատարված գրավոր ծանուցմամբ:

9.7. Կողմերը համաձայնվում են, որ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմանագրի ուժով իրականացվող բոլոր ծանուցումները, գրավոր տեղեկացումները համարվում են կատարված Պայմանագրով ամրագրված էլեկտրոնային հասցեներին համապատասխան հաղորդագրությունների առաքման միջոցով:

9.8. Կողմերը հավաստում են, որ Պայմանագրի կնքման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել Պայմանագիրը:

9.9. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Կատարող<br>«ԳԱՅԱ03» ՍՊԸ | Պատվիրատու<br>«ՋՈՒՆԻՈՐ ՍՊՈՐՏ» ՓԲԸ |
| --- | --- |
| ՀՎՀՀ 01306351 | ՀՎՀՀ 01843056 |
| ՀՀ, ք. Երևան, Միրաքյան 46/1 | ՀՀ, ք. Երևան, Ս. Տարոնցի 13 |
| «Ակբա Բանկ» ԲԲԸ | «ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 220290126873000 | Հ/Հ 163006346445 |
| ______________ տնօրեն | ______________ տնօրեն |
| Հայկ Աղաբեկյան Կ.Տ. | Վահե Գալստյան Կ.Տ. |

Հավելված 1

10.03.2021թ.-ին կնքված ձայնային համակարգի և լուսադիոդային էկրանի մատակարարման և ծառայության վճարովի մատուցման պայմանագրի

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| № | Ապրանքի անվանում | Չափի միավոր | Քանակ | Միավոր գին (ՀՀ դրամ) | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Բարձրախոս Work Neo 8 | հատ | 14 | 95.400 | 1.335.600 |
| 2. | Ձայնային ուժեղացուցիչ Work PA 4100 | հատ | 1 | 689.000 | 689.000 |
| 3. | Ձայնի կառավարման վահանակ Behringer X1204 USB | հատ | 1 | 212.000 | 212.000 |
| 4. | Խոսափող Shure SM 58 | հատ | 1 | 79.500 | 79.500 |
| 5. | Խոսափող Shure BLX 24/ SM 58 | հատ | 1 | 265.000 | 265.000 |
| 6. | Երկաթե պահարան Work Rack RM12 | հատ | 1 | 132.500 | 132.500 |
| 7. | Լուսադիոդային էկրան P8 | Ք. մ | 16.5 | 503.500 | 8.307.750 |
| 8. | Վիդեո պրոցեսոր | հատ | 1 | 265.000 | 265.000 |
| 9. | Փոխարկիչ Fiber/Lan | հատ | 2 | 79.500 | 159.000 |
| 10. | Մալուխներ, միակցիչներ, նյութեր | կոմպլեկտ | 1 | 374.650 | 374.650 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | **11.820.000** |

**Կատարող**
**« ԳԱՅԱ03» ՍՊԸ**

ՀՎՀՀ 01306351
ՀՀ, ք. Երևան, Միրաքյան 46/1
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220290126873000

տնօրեն
Հայկ Աղաբեկյան Կ.Տ.

**Պատվիրատու**
**«ՋՈՒՆԻՈՐ ՍՊՈՐՏ» ՓԲԸ**

ՀՎՀՀ 01843056
ՀՀ, ք. Երևան, Ս. Տարոնցի
«ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ
Հ/Հ 163006346445

տնօրեն
Վահե Գալստյան Կ.Տ.

Առ «10» մարտ 2021թ. Կնքված

N ԳՑ- 03/005/2021 պայմանագրի

| Կատարող<br>**«ԳԱՅԱ03» ՍՊԸ** | Պատվիրատու<br>**«ՋՈՒՆԻՈՐ ՍՊՈՐՏ» ՓԲԸ** |
|---|---|
| ՀՎՀՀ 01306351<br>ՀՀ, ք. Երևան, Միրաքյան 46/1<br>«Ակբա Բանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 220290126873000 | ՀՎՀՀ 01843056<br>ՀՀ, ք.Երևան, Ս.Տարոնցի 13<br>«ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 163006346445 |

ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ 03/005-001

«10» մայիսի 2021թ.

Պայմանգրի անվանումը՝ Ձայնային համակարգի և լուսադիոդային էկրանի մատակարարման և ծառայությունների վճարովի մատուցման պայմանգիր

Պայմանգրի կնքման ամսաթիվը՝ «10» մարտ 2021թ.

Պայմանգրի համարը՝ N ԳՑ- 03/005/2021

«Պատվիրատու»-ն՝ «Ջունիոր Սպորտ» ՓԲԸ , ի դեմս տնօրեն Վահե Գալստյանի և «Կատարող»-ը՝ «Գայա03» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Հայկ Աղաբեկյանի, հիմք ընդունելով վերը նշված պայմանագրում ամրագրված «Կատարող»-ի պարտավորությունների իրականացումը՝ այն է՝ պայամանգրի Հավելված 1-ում առկա ապրանքների ձեռք բերումը և վաճառքը, ինչպես նաև նշված ապրանքների տեղադրման, մոնտաժման աշխատանքների իրականացումը «Պատվիրատու»-ի կողմից տրամադրված տարածքում, հավաստում են, որ վերը նշված ծառայությունները իրականցվել են տեխնիկապես անթերի, պատշաճ մակարդակով և ժամանակին: «Պատվիրատու»-ն որևէ դիտողություն ապրանքների ձեռք բերման, ինչպես նաև տեղադրման, մոնտաժման աշխատանքների ավարտական ժամկետի ու որակի նկատմամբ չունի: Սույն Ակտ-ը հիմք է հանդիսանում, որպեսզի «Պատվիրատու»-ն իրականացնի վերջնահաշվարկ և կատարի պայմանգրի 4.6 ենթակետին համապատասխան մնացորդային գումարի այն է՝ 2.364.000 (երկու միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամի վերջնավճարը:

| № | Կատարված աշխատանքների համառոտ նկարագիր | Չափի միավոր | Քանակ | Միավոր գին (ՀՀ դրամ) | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | Բարձրախոս Work Neo 8 | հատ | 14 | 95.400 | 1.335.600 |
| | Ձայնային ուժեղացուցիչ Work PA 4100 | հատ | 1 | 689.000 | 689.000 |
| | Ձայնի կառավարման վահանակ Behringer X1204 USB | հատ | 1 | 212.000 | 212.000 |
| | Խոսափող Shure SM 58 | հատ | 1 | 79.500 | 79.500 |
| | Խոսափող Shure BLX 24/ SM 58 | հատ | 1 | 265.000 | 265.000 |
| | Երկաթե պահարան Work Rack RM12 | հատ | 1 | 132.500 | 132.500 |
| | Լուսադիոդային էկրան P8 | ք.մ | 16.5 | 503.500 | 8.307.750 |
| | Վիդեո պրոցեսոր | հատ | 1 | 265.000 | 265.000 |
| | Փոխարկիչ Fiber/Lan | հատ | 2 | 79.500 | 159.000 |
| | Մալուխներ, միակցիչներ, նյութեր | կոմպլեկտ | 1 | 374.650 | 374.650 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | **11.820.000** |

**Աշխատանքները հանձնեց**
**« ԳԱՅԱ03» ՍՊԸ**

________________ տնօրեն
Հայկ Աղաբեկյան Կ.Տ.

**Աշխատանքները ընդունեց**
**«ՋՈՒՆԻՈՐ ՍՊՈՐՏ» ՓԲԸ**

________________ տնօրեն
Վահե Գալստյան Կ.Տ.

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՅ- 08/006/2021

ք. Երևան «18» օգոստոս 2021թ.

«Վալենսիա» Հ/Զ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս տնօրեն Ա. Մաթևոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գայա03» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Հ. Աղաբեկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին մատակարարման և ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)։ Պայմանագրում Պատվիրատուն և Կատարողն անհատապես կանվանվեն Կողմ, իսկ միասին՝ Կողմեր։

1. Պայմանագրի առարկան

1.1. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կատարողը պարտավորվում է Պայմանագրով նախատեսված ժամկետներում, Երևանում Պատվիրատուի նշած հասցեում հանձնել Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ով (ապրանքների տեխնիկական բնութագիր-նախահաշիվ) նախատեսված անվանացանկին, նկարագրությանն ու քանակին համապատասխանող ապրանքներ, իրենց լրակազմերով (կոմպլեկտով) /առկայության դեպքում/, պատկանելիքներով /առկայության դեպքում/ ապրանքները (այսուհետ՝ Ապրանքներ), ինչպես նաև մատուցել նշված Ապրանքների՝ այդ թվում նաև դրա բաղկացուցիչ առանձին սարքավորումների ընթացիկ սպասարկման, տեղադրման, կարգաբերման, անհրաժեշտ լարանցումների մոնտաժման աշխատանքներ(այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատակարարված Ապրանքները, կատարված Ծառայությունները և վճարել դրանց համար Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում։

1.2. Պայմանագրով Ապրանքները և Ծառայությունները կհամարվեն պատշաճ և ամբողջությամբ կատարված հանձնման-ընդունման ակտի (այսուհետ՝ Ակտ) երկկողմ ստորագրման պահից։

2. Մատակարարման և Ծառայությունների պայմանները

2.1. Կատարողը Ապրանքները մատակարարում է Պայմանագրի ստորագրման պահից՝ մինչև 2021թ.-ի օգոստոսի 28-ը ներառյալ։

2.2. Կատարողը Ծառայությունները մատուցում է Պայմանագրի ստորագրման պահից՝ մինչև 2021թ.-ի օգոստոսի 28-ը ներառյալ։

2.3. Մատակարարման օր է համարվում Ապրանքները Պատվիրատուի կողմից Ակտի հիման վրա ընդունելու օրը։

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. <u>Կատարողը իրավունք ունի՝</u>

3.1.1. Պատվիրատուի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում Ապրանքներն և Ծառայությունները առանց որևէ հիմնավորման չընդունելու դեպքում հրաժարվել Պայմանագիրը կատարելուց։

3.1.2. Պատվիրատուից պահանջել վճարելու մատակարարված Ապրանքների և կատարված Ծառայությունների համար Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում։

3.2. <u>Կատարողը պարտավոր է՝</u>

3.2.1. Պայմանագրով նախատեսված Ապրանքները հանձնել Պատվիրատուին Պայմանագրով նախատեսված ժամկետում և վայրում։

3.2.2. Ապրանքները հանձնելու հետ միաժամանակ Պատվիրատուին հանձնել դրանց պատկանելիքները, ինչպես նաև դրանց վերաբերող փաստաթղթերը /առկայության դեպքում/.

3.2.3. Պատվիրատուին հանձնել Պայմանագրով նախատեսված տեսականու (այսուհետ՝ Տեսականու) և պատշաճ որակի Ապրանքներ.

3.2.4. Ապրանքները Պատվիրատուին հանձնել պատշաճ տարայով և (կամ) փաթեթով (առկայության դեպքում)

3.2.5. Պատվիրատուի պահանջով ողջամիտ ժամկետում, անհատույց վերացնել Ապրանքների ապափաթեթավորման և առաջին կիրառության ժամանակ ի հայտ եկած թերությունները, վնասվածքները և/կամ անսարքությունները, կամ փոխարինել դրանք համանման ապրանքներով, ընդ որում նման պահանջ Պատվիրատուի կողմից կարող է ներկայացվել Ապրանքները գնելուց հետո 20 օրվա ընթացքում:

3.2.6. Ծառայություններն ամբողջ ծավալով մատուցել Պայմանագրով նշված ժամկետում:

3.2.7. Ծառայությունները մատուցել տվյալ տեսակի ծառայությունների մատուցման համար սահմանված կանոնների և տեխնիկական նորմերի պահպանմամբ՝ ըստ անհրաժեշտության համապատասխան փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ:

3.2.8. Պատվիրատուի պահանջով, ողջամիտ ժամկետում, անհատույց, վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները և/կամ բնականոն օգտագործման պայմաններում առաջացած վնասվածքները:

3.3. <u>Պատվիրատուն իրավունք ունի՝</u>

3.3.1. Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Կատարողը հրաժարվում է հանձնել վաճառված ապրանքը:

3.3.2. Պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված ապրանքի համար վճարելուց, եթե Կատարողը սույն Պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, իսկ եթե ապրանքի համար Պատվիրատուն վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

3.3.3. Եթե Կատարողի կողմից հանձնվել է Տեսականու մասին պայմանի խախտմամբ Ապրանքներ՝

ա) հրաժարվել Ապրանքներից

բ) պահանջել փոխարինել մատակարարված Ապրանքները Պայմանագրով նախատեսված Տեսականուն համապատասխանող Ապրանքներով

գ) ընդունել հանձնված Ապրանքները:

3.3.4. Եթե հանձնված է անպատշաճ որակի Ապրանքներ, պահանջել Կատարողից՝

ա) համաչափ պակասեցնել Ապրանքների գինը

բ) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում անհատույց վերացնել Ապրանքների թերությունները

գ) հատուցելու Ապրանքների թերությունները վերացնելու համար իր կողմից կատարած ծախսերը:

3.3.5. Ապրանքների որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերություններ) իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքների համար վճարված գումարը (եթե մինչև նման պահանջ ներկայացնելու պահը կատարվել է վճարում)

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքներով:

3.3.6. Անկոմպլեկտ Ապրանքներ հանձնելու դեպքում պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու Ապրանքների գինը

բ) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում կոմպլեկտավորելու Ապրանքները:

3.3.7. Եթե Կատարողը ողջամիտ ժամկետում չի կատարել Ապրանքները կոմպլեկտավորելու պահանջները՝

ա) պահանջել փոխարինելու անկոմպլեկտ Ապրանքները կոմպլեկտավորված Ապրանքներով

բ) հրաժարվել Պայմանագրից և պահանջել վերադարձնելու վճարված գումարը (եթե մինչև նման պահանջ ներկայացնելու պահը կատարվել է վճարում):

3.4. Պատվիրատուն պարտավոր է՝

3.4.1. Ապրանքների և Ծառայությունների դիմաց վճարել Պայմանագրով նախատեսված գումարը Պայմանգրով սահմանված ժամկետում:

3.4.2. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.4.3. Ապրանքներն ընդունելիս, ստուգել դրանց քանակը և որակը:

## 4. Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1. Պայմանագրով նախատեսված Ապրանքների և Ծառայությունների ընդհանուր գինը կազմում է 5.122.500 (հինգ միլիոն հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Գնի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ առանձին համաձայնագիր կազմելով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.2. Պայմանագրի 4.1 կետում նշված գինը ներառում է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ի Ապրանքների գնանշումը, մատուցվող Ծառայությունների վճարը, պայմանները կատարելու հետ կապված՝ Կատարողի այլ ծախսերը:

4.3. Պատվիրատուն Ապրանքների դիմաց վճարում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի՝ Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին՝ բանկային փոխանցմամբ:

4.4. Պայմանագրի 4.1. կետով նախատեսված ընդհանուր գնի մի մասը՝ այն է 4.322.500 (չորս միլիոն երեք հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարը, որպես կանխավճար Պատվիրատուն վճարում է Կատարողին՝ կանխավճարային գումարի փոխանցման հաշվի հիման վրա, պայմանագիրը երկկողմ հաստատելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

4.5. Պայմանագրի 4.1. կետով նախատեսված ընհանուր գումարի և Պայմանագրի 4.4. կետով որպես կանխավճար վճարված գումարների տարբերությունը՝ այն է 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը, Պատվիրատուն կվճարի Կատարողին Ակտի երկկողմանի ստորագրմանը և հաշվի երկկողմանի հաստատմանը հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ հաշիվը Կատարողի կողմից տրամադրվում է Պատվիրատուին Ակտով պատշաճ մատակարարված Ապրանքները և Ծառայություններն ընդունվելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2. Ապրանքների համար երաշխիքային ժամկետը սահմանվում է 2 (երկու) տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքների հանձնում-ընդունումը

6.1. Ապրանքներն ընդունելու ժամանակ Պատվիրատուն ստուգում է դրանց համապատասխանությունն Ապրանքներն ուղեկցող փաստաթղթերում նշված տվյալներին (ներառյալ՝ Պայմանագիրը)՝ ըստ անվանացանկի, քանակի, որակի և տեսականու:

6.2. Ապրանքների հանձնման-ընդունման գործընթացն ավարտվում է Ակտի երկկողմանի ստորագրմամբ, ինչը փաստում է, որ Ապրանքները Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետում ու վայրում հանձնվել և ընդունվել են Պատվիրատուի կողմից:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Եթե Կատարողը չի մատակարարել Պայմանագրով նախատեսված քանակի Ապրանքները, կամ չի կատարել անորակ Ապրանքները սահմանված ժամկետում պատշաճ որակի Ապրանքներով փոխարինելու Պատվիրատուի պահանջը, ապա Պատվիրատուն իրավունք ունի չմատակարարված Ապրանքները ձեռք բերել այլ անձանցից՝ ձեռքբերման հետ կապված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը վերագրելով Կատարողին:

7.2. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել վճարելու անպատշաճ որակի Ապրանքների համար, իսկ եթե արդեն վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարները:

7.3. Կատարողը, Պայմանագրով սահմանված ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գնորդին վերջինիս գրավոր պահանջով վճարում է տույժ՝ Ապրանքների արժեքի 0,5 տոկոսի չափով:

7.4. Պատվիրատուն, Պայմանագրով սահմանված վճարման ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Կատարողին վերջինիս գրավոր պահանջով վճարում է տույժ՝ Ապրանքների արժեքի 0,5 տոկոսի չափով:

7.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1. Պայմանագիրը կազմված է և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

9.2. Պայմանագիրը հանդիսանում է դրա առարկայի շուրջ Կողմերի ամբողջական համաձայնություն և գերակայում է Կողմերի միջև նախորդ բոլոր պայմանավորվածությունների նկատմամբ:

9.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև Կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը:

9.4. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.5. Պայմանագրի բոլոր փոփոխությունները և/կամ լրացումները Կողմերի միջև ձևակերպվում են գրավոր և ստորագրվում Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից՝ հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մասը:

9.6. Պայմանագիրը կարող է լուծվել յուրաքանչյուր Կողմի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին այդ մասին կատարված գրավոր ծանուցմամբ:

9.7. Կողմերը համաձայնվում են, որ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմանագրի ուժով իրականացվող բոլոր ծանուցումները, գրավոր տեղեկացումները համարվում են կատարված Պայմանագրով ամրագրված էլեկտրոնային հասցեներին համապատասխան հաղորդագրությունների առաքման միջոցով:

9.8. Կողմերը հավաստում են, որ Պայմանագրի կնքման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել Պայմանագիրը:

9.9. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Կատարող<br>«ԳԱՅԱ03» ՍՊԸ | Պատվիրատու<br>«Վալենսիա» Հ/Զ ՍՊԸ |
|---|---|
| ՀՎՀՀ 01306351<br>ՀՀ, ք. Երևան, Միրաքյան 46/1<br>«Ակբա Բանկ» ԲԲԸ<br>Հ/Հ 220290126873000 | ՀՎՀՀ 00835704<br>ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան պող. 40<br>«Բիբլոսբանկ Արմենիա» ՓԲԸ<br>Հ/Հ 2140005360180100 |
| _______________ տնօրեն<br>Հ. Աղաբեկյան Կ.Տ. | _______________ տնօրեն<br>Ա. Մաթոսյան Կ.Տ. |

Հավելված 1

10.03.2021թ.-ին կնքված ձայնային համակարգի և լուսադիոդային էկրանի մատակարարման և ծառայության վճարովի մատուցման պայմանագրի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| № | Ապրանքի անվանում | Չափի միավոր | Քանակ | Միավոր գին (ՀՀ դրամ) | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Լուսադիոդային ժապավեն | մ | 1250 | 900 | 1.125.000 |
| 2. | Լուսադիոդային լուսատու 1 | հատ | 3 | 250.000 | 750.000 |
| 3. | Լուսադիոդային լուսատու 2 | հատ | 12 | 60.000 | 720.000 |
| 4. | Լուսադիոդային լուսատու 3 | հատ | 12 | 30.000 | 360.000 |
| 5. | Լուսադիոդային լուսատու 4 | հատ | 30 | 15.000 | 450.000 |
| 6. | Լարանցումների , մոնտաժման և կարգաբերման աշխատանք | | | | 1.717.500 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | **5.122.500** |

Կատարող
« ԳԱՅԱ03» ՍՊԸ

ՀՎՀՀ 01306351
ՀՀ, ք. Երևան, Միրաքյան 46/1
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220290126873000

_________________ տնօրեն
Հ. Աղաբեկյան Կ.Տ.

Պատվիրատու
«Վալենսիա» Հ/Զ ՍՊԸ

ՀՎՀՀ 00835704
ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան պող. 40
«Բիբլոսբանկ Արմենիա» ՓԲԸ
Հ/Հ 2140005360180100

_________________ տնօրեն
Ա. Մաթևոսյան Կ.Տ.

Առ «18» օգոստոսի 2021թ. Կնքված

N ԳՑ- 08/006/2021 պայմանագրի

Կատարող
«ԳԱՅԱ03» ՍՊԸ

ՀՎՀՀ 01306351
ՀՀ, ք. Երևան, Միրաքյան 46/1
«Ակբա Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220290126873000

Պատվիրատու
«Վալենսիա» Հ/Զ ՍՊԸ

ՀՎՀՀ 00835704
ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան պող. 40
«Բիբլոսբանկ Արմենիա» ՓԲԸ
Հ/Հ 2140005360180100

ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ 08/006-001

«23» օգոստոսի 2021թ.

Պայմանգրի անվանումը՝ Լուսավորության սարքերի մատակարարման և ծառայությունների վճարովի մատուցման պայմանգիր

Պայմանգրի կնքման ամսաթիվը՝ «18» օգոստոս 2021թ.

Պայմանգրի համարը՝ N ԳՑ- 08/006/2021

«Պատվիրատու»-ն՝ «Վալենսիա» Հ/Զ ՍՊԸ , ի դեմս տնօրեն Ա.Ս.Մաթևոսյանի և «Կատարող»-ը՝ «Գայա03» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Հ.Ս Աղաբեկյանի, հիմք ընդունելով վերը նշված պայմանագրում ամրագրված «Կատարող»-ի պարտավորությունների իրականացումը՝ այն է՝ պայամանգրի Հավելված 1-ում առկա ապրանքների ձեռք բերումը և վաճառքը, ինչպես նաև նշված ապրանքների տեղադրման, մոնտաժման աշխատանքների իրականացումը «Պատվիրատու»-ի կողմից տրամադրված տարածքում, հավաստում են, որ վերը նշված ծառայությունները իրականցվել են տեխնիկապես անթերի, պատշաճ մակարդակով և ժամանակին: «Պատվիրատու»-ն որևէ դիտողություն ապրանքների ձեռք բերման, ինչպես նաև տեղադրման, մոնտաժման աշխատանքների ավարտական ժամկետի ու որակի նկատմամբ չունի: Սույն Ակտ-ը հիմք է հանդիսանում, որպեսզի «Պատվիրատու»-ն իրականացնի վերջնահաշվարկ և կատարի պայմանգրի 4.5 ենթակետին համապատասխան մնացորդային գումարի այն է՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի վերջնավճարը:

| № | Կատարված աշխատանքների համառոտ նկարագիր | Չափի միավոր | Քանակ | Միավոր գին (ՀՀ դրամ) | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| | Լուսադիոդային ժապավեն | մ | 1250 | 900 | 1.125.000 |
| | Լուսադիոդային լուսատու 1 | հատ | 3 | 250.000 | 689.000 |
| | Լուսադիոդային լուսատու 2 | հատ | 12 | 60.000 | 720.000 |
| | Լուսադիոդային լուսատու 3 | հատ | 12 | 30.000 | 360.000 |
| | Լուսադիոդային լուսատու 4 | հատ | 30 | 15.000 | 450.000 |
| | Լարանցումների , մոնտաժման և կարգաբերման աշխատանք | | | | 1.717.500 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 5.122.500 |

Աշխատանքները հանձնեց
« ԳԱՅԱ03» ՍՊԸ

տնօրեն
Հ. Աղաբեկյան Կ.Տ.

Աշխատանքները ընդունեց
«Վալենսիա» Հ/Ձ ՍՊԸ

տնօրեն
Ա. Մաթևոսյան Կ.Տ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«*ԹՓՄ ԲՄԱՇՁԲ 2022*» ծածկագրով Բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«04» մարտ 2022թ.

ք. Երևան, Գ. Նժդեհ 17

Մասնակցում էին՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Վ. Տիգրանյան

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Նավասարդյան

Գ. Դարբինյան

Գնումների համակարգող՝ Տ. Մադոյան

Հայտերի գնահատման մասին

1. ԹՓՄ ԲՄԱՇՁԲ 2022 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ է ներկայացրել 2 մասնակից՝ Գայա03 ՍՊԸ-ն և Բրիդջ ՍՊԸ-ն:
2. Մասնակիցների հայտերը համապատասխանում էին հրավերի պահանջներին:
3. Մասնակիցներից պահանջվել է իրենց գնային առաջարկի 50%-ի չափով ներկայացնել պայմանագիր: 2 մասնակիցների պայմանագրերը համապատասխանում են պահանջներին:

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ընդունված որոշումները՝

1.1. **Որոշում (թիվ 1)՝** Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը որոշեց **Գայա03 ՍՊԸ-ի և Բրիդջ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

1.2. **Որոշում (թիվ 2) Գայա03 ՍՊԸ -ին և Բրիդջ ՍՊԸ-ին** ճանաչել ընտրված մասնակիցներ, որպես ընթացակարգի պայմաններին համապատասխան հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ և վերջիններիս հետ կնքել պայմանագիր:

1.3. **Որոշում (թիվ 3)** Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Նիստին ներկա անդամների անունները և ազգանունները

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ __________ Վ . Տիգրանյան

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ __________ Դ. Հովհաննիսյան

Անդամներ՝ __________ Ա. Նավասարդյան

__________ Գ. Դարբինյան

# ПРОТОКОЛ № 002

# Заседание оценочной комиссии с кодом " ԹՓՄ ԲՄԱՃՁԲ 2022"

Г. Ереван 04.03.2022

Участники

Председатель комиссии Давид Оганесян

Секретарь комиссии Тигран Мадоян

Члены комитета Арман Навасардян

Гарик Дарбинян

Об открытии заявок на закупку с кодом  и подведение итогов

1. На открытый конкурс под кодом TPM MSDSB 2022 подано 2 претендента: ООО «Гая 03» և ООО «Бридж».
2. Предложения участников соответствовали требованиям приглашения
3. Участники должны были представить контракт в размере 50% от их ценового предложения. Контракты 2-х участников соответствуют требованиям
4. 

**1. Решения, принятые ответственным отделом:**

1.1 Решение (№1): Начальником ответственного отдела принято решение о рассмотрении заявлений, представленных ООО «Гая 03» և ООО «Бридж».

1.2 Решение (№2) Признать ООО «Гая 03» և ООО «Бридж» избранными участниками торгов в соответствии с условиями процедуры участники торгов с минимальным ценовым предложением заключают с последними договор.

1.3 Решение (№3) Оценочная комиссия приняла решение утвердить текст объявления о принятии решения о заключении договора с отобранными участниками.

Оценочная комиссия решила

Было принято решение: за 3, против 0.

1. Оценочная комиссия приняла решение утвердить текст объявления о решении подписать договор.

Было принято решение: за 3, против 0.

Имена, фамилии и подписи присутствующих на заседании членов комиссии.

Председатель оценочной комиссии Давид Оганесян

Члены комиссии Арман Навасардян

Гарегин Дарбинян

Секретарь комиссии Тигран Мадоян

# ПРОТОКОЛ № 002

# Заседание оценочной комиссии с кодом " ԹՓՄ ԲՄԱԾՁԲ 2022"

Г. Ереван 04.03.2022

Участники

Председатель комиссии Давид Оганесян

Секретарь комиссии Тигран Мадоян

Члены комитета Арман Навасардян

Гарик Дарбинян

Об открытии заявок на закупку с кодом и подведение итогов

1. На открытый конкурс под кодом TPM MSDSB 2022 подано 2 претендента: ООО «Гая 03» և ООО «Бридж».
2. Предложения участников соответствовали требованиям приглашения
3. Участники должны были представить контракт в размере 50% от их ценового предложения. Контракты 2-х участников соответствуют требованиям
4.

**1. Решения, принятые ответственным отделом:**

1.1 Решение (№1): Начальником ответственного отдела принято решение о рассмотрении заявлений, представленных ООО «Гая 03» և ООО «Бридж».

1.2 Решение (№2) Признать ООО «Гая 03» և ООО «Бридж» избранными участниками торгов в соответствии с условиями процедуры участники торгов с минимальным ценовым предложением заключают с последними договор.

1.3 Решение (№3) Оценочная комиссия приняла решение утвердить текст объявления о принятии решения о заключении договора с отобранными участниками.

Оценочная комиссия решила

Было принято решение: за 3, против 0.

1. Оценочная комиссия приняла решение утвердить текст объявления о решении подписать договор.

Было принято решение: за 3, против 0.

Имена, фамилии и подписи присутствующих на заседании членов комиссии.

| | |
|---|---|
| Председатель оценочной комиссии | Давид Оганесян |
| Члены комиссии | Арман Навасардян |
| | Гарегин Дарбинян |
| Секретарь комиссии | Тигран Мадоян |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

**«*ԹՓՄ ԲՄԱՇՁԲ 2022*» ծածկագրով Բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան, Գ. Նժդեհի 17

«04» մարտ 2022թ.

Մասնակցում էին՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Վ. Տիգրանյան

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Նավասարդյան

Գ. Դարբինյան

Գնումների համակարգող՝ Տ. Մադոյան

**Հայտերի գնահատման մասին**

1. **ԹՓՄ ԲՄԱՇՁԲ 2022 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին հայտ է ներկայացրել 2 մասնակից՝ Գայա03 ՍՊԸ-ն և Բրիդջ ՍՊԸ-ն:**
2. **Մասնակիցների հայտերը համապատասխանում էին հրավերի պահանջներին:**
3. **Մասնակիցներից պահանջվել է իրենց գնային առաջարկի 50%-ի չափով ներկայացնել պայմանագիր: 2 մասնակիցների պայմանագրերը համապատասխանում են պահանջներին:**

1. Պատասխանատու ստորաբաժանման կողմից ընդունված որոշումները՝

1.1. **Որոշում (թիվ 1)՝** Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը որոշեց **Գայա03 ՍՊԸ-ի և Բրիդջ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

1.2. **Որոշում (թիվ 2) Գայա03 ՍՊԸ** -ին և **Բրիդջ ՍՊԸ-ին** ճանաչել ընտրված մասնակիցներ, որպես ընթացակարգի պայմաններին համապատասխան հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ և վերջիններիս հետ կնքել պայմանագիր:

1.3. **Որոշում (թիվ 3)** Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

1.4. Որոշում (թիվ 4) Անգործության ժամկետ սահմանել 10 օր՝ մինչև 14 մարտի 2022թ.:

**Նիստին ներկա անդամների անունները և ազգանունները**

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ ____________ Վ. Տիգրանյան

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Դ. Հովհաննիսյան

Անդամներ՝ ____________ Ա. Նավասարդյան

____________ Գ. Դարբինյան

Գնումների համակարգող՝ ____________ Տիգրան Մադոյան